ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Տիգրան Մեծի պող.4
Հեռ. 011 52 18 77
Էլ. փոստ: info@spm.am
Վեբ կայք: www.stateproperty.am

Ձեր 01/26102-2024

30 դեկտեմբերի 2024թ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Գ. ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պապոյան,

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկի վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 28-ի N 461-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում է հետևյալը՝

Նախագծի նախաբանում հղում է կատարվում «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածին: Համաձայն «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ օրենքը սահմանում է համայնքային կառավարչական հիմնարկների իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության կարգը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ նշել, թե արդյոք «Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկը հանդիսանում է համայնքային կառավարչական հիմնարկ, թե ոչ, կամ փոխել նախագծի հղումը:

Կատարող՝ Նարինե Գրիգորյան
Հեռ. 011 527390

Recoverable Signature

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**